

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՈՇՈՒՄ

“ \_\_\_ ” \_\_\_\_\_ 2020թ. N \_\_\_ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006  
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1262-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1262-Ն որոշումը լրացնել նոր 2.1 կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1 Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին ու Հայաստանի Հանրապետության մարզպետներին (Երևանի քաղաքպետին), անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով ուսումնական հաստատության առանձնահատկությունները, տվյալ բյուջետային տարվա համար «1146. Հանրակրթության ծրագիր» ծրագրի «11001. Տարրական ընդհանուր հանրակրթություն», «11002. Հիմնական ընդհանուր հանրակրթություն» և «11003. Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» միջոցառումներով իրենց հատկացված գումարների շրջանակներում իրենց ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների հատկացումներում կատարել վերաբաշխումներ՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության մարզպետները (Երևանի քաղաքպետը) այդ վերաբաշխումները պետք է համաձայնեցնեն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**  
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ**  
**ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1262-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ**  
**ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

**Անհրաժեշտությունը**

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացված որոշման նախագծի անհրաժեշտությունը բխում է Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ծրագրեր իրականացնող դպրոցների նվազագույն կարիքներին համապատասխան ֆինանսավորման խնդիրները լուծելու պահանջներից: ՀՀ կառավարության 31. 10. 2019թ. N 1503-Ն որոշմամբ ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման մեջ իրականացված փոփոխությունները հնարավորություն տվեցին իրականացնել ուսումնական հաստատությունների առավել նպատակային և արդյունավետ ֆինանսավորում, սակայն դեռևս չի վերացել վերաբաշխումների անհրաժեշտությունը: Հանրակրթական դպրոցների ֆինանսավորման որոշ դեպքերում խնդիրներ է առաջացնում որոշ դպրոցների ֆինանսավորման հարցում, որը պայմանավարված է տվյալ ուսումնական հաստատության առանձնահատկություններից, շենքային պայմաններից և այլն:

**Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը**

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ծախսերի հաշվարկման և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 25-ի N 773 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1262-Ն որոշման նոր 2.1 կետով («2.1 Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին ու Հայաստանի Հանրապետության մարզպետներին (Երևանի քաղաքապետին), անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով ուսումնական հաստատության առանձնահատկությունները, տվյալ բյուջետային տարվա համար «1146. Հանրակրթության ծրագիր» ծրագրի «11001. Տարրական ընդհանուր հանրակրթություն», «11002. Հիմնական ընդհանուր հանրակրթություն» և «11003. Միջնակարգ ընդհանուր հանրակրթություն» միջոցառումներով իրենց հատկացված գումարների շրջանակներում իրենց ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների հատկացումներում կատարել վերաբաշխումներ՝ նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության մարզպետները (Երևանի քաղաքապետը) այդ վերաբաշխումները պետք է համաձայնեցնեն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ») լրացումը թույլ կտա

պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին հանրակրթական ծրագրերի իրականացման համար ապահովել դպրոցների նվազագույն կարիքներին համապատասխան ֆինանսավորում: Իրավիճակը լուծելու համար պետական լիազոր մարմնին կթույլատրվի վերաբաշխել պետական բյուջեով հանրակրթության ծրագրի ընդհանուր հանրակրթության միջոցառումներով հատկացվող միջոցները՝ միաժամանակ հսկողությունը վերապահելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

### **Ակնկալվող արդյունքը**

Իրավական ակտի ընդունումը թույլ կտա պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին հանրակրթական ծրագրերի իրականացման համար ապահովել դպրոցների նվազագույն կարիքներին համապատասխան ֆինանսավորում:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեի եկամուտների նվազեցման կամ ծախսերի ավելացման մասին**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N1262-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը չի նախատեսում պետական բյուջեի եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում:

## **ՏԵՂԵԿԱՆՔ**

**«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտության մասին**

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի N 1262-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1262-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ  
 ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
 ՇԱՀԱԳՐԳԻՌ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

h/h	Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացությունը	Կատարված փոփոխությունը
1	2	3	4	5
1.	<b>ՀՀ ֆինանսների նախարարություն 31.01.2020թ. թիվ 01/8-3/1164-2020 գրություն</b>	1. Առաջարկվում է նախագծի 1-ին կետում նշված «տվյալ բյուջետային տարվա համար հանրակրթության ծրագրով, իրենց հատկացված գումարների շրջանակներում» բառերը փոխարինել «իրենց ենթակայության» բառերով: 2. Առաջարկվում է փոփոխության մեջ նշել նաև դպրոցների ծախսերում վերաբաշխումների կատարման ժամկետը:	Ընդունված է մասնակի:  Ընդունված է:	Նախագծի կետը խմբագրված է նոր շարադրությամբ:  Փոփոխությունը կատարված է:
2.	<b>ՀՀ արդարադատության նախարարություն 10.02.2020թ. թիվ 01/27.1/2500-2020գրություն</b>	1. Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման և ներկայացված նախագծի նախաբանում բացակայում է որոշման ընդունման իրավական հիմքը, կարծում ենք, որ նախագծի ընդունումը լրացուցիչ քննարկման կարիք ունի: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 6-րդ	Ընդունված չէ:	«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված է, որ ուսումնական հաստատություններին պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի

		<p>հողվածի համաձայն՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին: Հետևաբար, 2006 թվականի օգոստոսի 24-ի թիվ 1262-Ն որոշման նախաբանում համապատասխան օրենքի նորմի բացակայությունը հնարավորություն չի տալիս գնահատել նման որոշման ընդունման լիազորության առկայությունը:</p> <p>2. Նախագծի վերնագրում «փոփոխություն» բառն անհրաժեշտ է փոխարինել «լրացում» բառով՝ նկատի ունենալով նախագծի 1-ին կետի պահանջները: Հիշյալ դիտողությունը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի պահանջներից:</p> <p>3. Նախագծի 1-ին կետում նախատեսվում է լրացնել 2.1-րդ կետ, որը սահմանում է. «2.1 Թույլատրել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին ու Հայաստանի Հանրապետության մարզպետներին (Երևանի քաղաքապետին), անհրաժեշտության դեպքում, հաշվի առնելով ուսումնական հաստատության առանձնահատկությունները, ուսումնական կիսամյակի սկսվելուց հետո մեկամսյա ժամկետում</p>	<p>Ընդունված է:</p> <p>Ընդունված է:</p>	<p>Հանրապետության կառավարությունը:</p> <p>Փոփոխությունը կատարված է:</p> <p>Փոփոխությունը կատարված է:</p>
--	--	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-----------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------

		<p>իրենց ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին սույն որոշման 1-ին կետով սահմանված բանաձևով հաշվարկված հատկացումներում կատարել վերաբաշխումներ՝ համաձայնեցնելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ»:</p> <p>Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ վերոնշյալ կետում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին թույլատրվում է կատարել վերաբաշխում՝ համաձայնեցնելով ինքն իր հետ, որը տրամաբանական չէ: Հետևապես, նախագծի 1-ին կետն անհրաժեշտ է խմբագրել:</p>		
3.				